



ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N ՓՎ/96-2023

ՀԵՌԱԿԱ՝ ԳՐԱՎՈՐ ՀԱՐՑՄԱՆ ԿԱՐԳՈՎ ԿԱՅԱՑԱԾ՝ ՀՅՈՒՄԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ, Մ-6, ՎԱՆԱՁՈՐ-ԱԼԱՎԵՐԴԻ-ՎՐԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԱՎՏՈՄՈՔԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀԻ (ԿՄ 38+450 ԿՄ 90 + 191 ՀԱՏՎԱԾ) ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԵՎ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ, ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԵՎ ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

8 մայիսի 2023 թվական

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Փոխվարչապետ

S. Խաչատրյան

ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐ

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար

Գ. Սանոսյան

Շրջակա միջավայրի նախարար

Հ. Սիմիոյան

Արդարադատության նախարար

Գ. Մինասյան

Էկոնոմիկայի նախարար

Վ. Քերոբյան

Կադաստրի կոմիտեի ղեկավար

Ս. Թովմասյան

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների

նախարարի տեղակալ

Ք. Ղալեչյան

«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի գործադիր տնօրեն

Գ. Ավետիսյան

Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ

Լ. Հովհաննիսյան

«Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի

իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի տնօրենի տեղակալ,

քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրի

ղեկավար

Ն. Մարտիրոսյան

Խորհրդի նիստն իրականացվել է ա.թ. մայիսի 8-ին հեռակա՝ գրավոր հարցման կարգով: ՀՀ փոխվարչապետ, կառավարման խորհրդի նախագահ Տիգրան Խաչատրյանի՝ ա.թ. մայիսի 2-ի թիվ 03.1/03.28/14629-2023 գրությամբ Խորհրդի անդամներին ուղարկվել են օրակարգը և կից նյութերը՝ Խորհրդի անդամներին առաջարկելով իրականացնել գրավոր քվեարկություն:

Խորհրդի անդամների կողմից օրակարգի վերաբերյալ առարկություններ կամ առաջարկություններ չեն ստացվել, ուստի օրակարգը համարվել է հաստատված:

Համաձայն Խորհրդի աշխատակարգի 13-րդ կետի և սույն նիստի գրավոր քվեարկության արդյունքների՝ Խորհուրդն օրակարգում ներառված հարցերի վերաբերյալ կայացրեց հետևյալ որոշումը.

1. **Օրակարգային 1-ին հարց՝** «Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի» Տրանշ 2-ի շրջանակներում Մ1 Երևան-Գյումրի-Բավրա (կմ 37+545-ից մինչև կմ 71+435) ավտոճանապարհի շուրջ 34.0 կմ-ի շինարարական աշխատանքների մրցույթի շրջանակներում տեխնիկական գնահատման արդյունքների վերաբերյալ:

Որոշվեց՝ ընդունել ի գիտություն օրակարգային 1-ին հարցը:

2. **Օրակարգային 2-րդ հարց՝** «Մ6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական ավտոճանապարհի վերականգնման և բարելավման ծրագրի» շրջանակներում Դիլիջանի և Պուշկինի թունելների վերականգնման մանրամասն նախագծերի պատրաստման, բնապահպանական գնահատման փաստաթղթերի և շինարարական աշխատանքների գնումների մրցութային փաստաթղթերի տեխնիկական մասի պատրաստման խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման մրցույթի արդյունքները և կնքվող պայմանագիրը հաստատելու վերաբերյալ:

Որոշվեց՝ հավանություն տալ օրակարգային 2-րդ հարցին:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ**

ՏԻԳՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ